ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարան

Ուսուցիչ՝ Լ. Գասպարյան Արագածի թիվ 1մ/դ

		Շարային պատրաստություն		
1-2		**Թեմա 1.** Շարային վարժանքներն ու շարժումն առանց զենքի:	2ժամ	գ
	Նպատակը	1.Սովորեցնել և վարժեցնել ճշտորեն կատարել դարձումներ շարժման ժամանակ, շարքից դուրս գալը և շարք վերադառնալը: 2.Սովորեցնել և վարժեցնել զինվորական ողջույնի կատարումը տեղում և շարժման ժամանակ: 3.Ծանոթացնել զինվորական քաղաքավարության կանոններին:		
	Վերջնարդյունքը	1.*Իմանա և ցուցադրի* շարժման ժամանակ դարձումներ կատարելու, տեղում զինվորական ողջույնը կատարելու տարրերը: 2.*Կատարի* դարձումները, զինվորական ողջույնը շարժման ժամանակ, շարքից դուրս գալը և շարք վերադառնալը: 3.*Կատարի* շարային կանոնադրության համաձայն զինվորական ողջույն տալը տեղում և շարժման ընթացքում:		
		Ռազմարվեստի պատմության հիմնադրույթներ		
3-4		**Թեմա 1.** Հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը Հին դարաշրջանում: **Թեմա 2.** Հայքի, Տիգրանակերտի, Արածանիի, Ձիրավի, Ներսեհապատի ճակատամարտերում:	1ժամ 1ժամ	
	Նպատակը	1.Ներկայացնել՝ 1.1.հայկական բանակի դերը հայոց պետականության և անկախության պահպանման գործում, 1.2.հայկական բանակի ստեղծման նախադրյալները, աղբյուրները, 1.3.ճակատամարտերի ժամանակ զորքերի գործողությունները (մարտավարությունը), բանակի խնդիրները, զորքերի թվաքանակը և սպառազինությունը: 2.Ծանոթացնել հին դարերի հայ նշանավոր զորավարներին: 3.Ձևավորել հայրենասիրական աշխարհայացք,		

		կարևորել մեր պատմության մեջ բանակի դերը երկրի պաշտպանության գործում:		
	Վերջնարդյունքը	1. Ընդհանուր գծերով *նկարագրի* հին դարերում հայկական բանակի կառուցվածքը: 2. *Գիտի* հին դարերի նշանակալից ճակատամարտերը, զորավարներին, ինչ զորատեսակներից էր բաղկացած հայկական բանակը: 3. *Ներկայացնի* հին աշխարհի հայտնի զորավարների կիրառած մարտավարական հնարքները:		
		Մարտավարության հիմունքներ		
5-6		**Թեմա 1.** Մարտավարական հնարքներ:	2ժամ	գ
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ անհատական քողարկման վերաբերյալ: 2.Բացատրել դրանց հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* մարտավարական անհատական հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները: 2.*Կատարի* քողարկում: 3.Ըստ քողարկման հատկանիշների *ուսումնասիրի* տեղանքը՝ որոնելու և հայտնաբերելու պայմանական քողարկված հակառակորդին:		
		Մարտավարական ֆիզկուլտուրա		
7-8 9-11		**Թեմա 1.** Հարձգության դիրքի փոփոխում՝ գլորումով դեպի կողք: **Թեմա 2.** Քողարկված տեղաշարժ մարտի դաշտում: Քողարկված սողեսող տեղաշարժ (առաջ, հետ, աջ և ձախ): Անաղմուկ քայլերով տեղաշարժ:	3ժամ 2ժամ	գ գ
	Նպատակը	1.Ուսուցանել՝ 1.1.մարտական իրավիճակին համապատասխան հրաձգային դիրքավորում ընդունելու կարգը, 1.2.հրաձգության սեկտորի փոփոխումը կայուն դիրքավորումներում:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* մարտական պայմաններում ինքնաձիգը կրելու առանձնահատկությունները և *տիրապետի* դրա հիմնական ձևերին: 2.Հմտորեն *իրականացնի* անցում. ինքնաձիգով կանգնած նախամարտական դիրքավորումից մարտական դիրքավորման: 3.*Կատարի* անցում հրաձգության մի դիրքավորումից մեկ այլ դիրքավորման:		
		Կրակային պատրաստություն		
12-18		**Թեմա 1.** Զինվորի հիմնական զենքը:	7ժամ	գ

	Նպատակը	1.Ծանոթացնել ինքնաձիգի հիմնական տեսակները: 2.Ուսուցանել ինքնաձիգի հիմնական մարտավարական-տեխնիկական բնութագրերը, կառուցվածքը, պահպանման կանոնները, հրաձգության առանձնահատկությունները: 3.Ձևավորել պատկերացումներ ինքնաձիգի մարտական հատկությունների վերաբերյալ: 4.Տալ ինքնաձիգը ոչ լրիվ քանդելու և հավաքելու սկզբնական ունակություններ: 5.Ձևավորել աշակերտների մոտ զենքի հանդեպ սեր և պատասխանատվության զգացում:		
	Վերջնարդյունքը	1.*Թվարկի* ՀՀ ԶՈՒ-ում կիրառվող հրաձգային զենքի հիմնական տեսակները՝ տալով դրանց նշանակությունը: 2.*Գիտի* ԱԿՄ (ԱԿ-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը, դրանց հիմնական մարտավարական-տեխնիկական բնութագրերը, պահպանման կանոնները: 3.*Գիտի* ինքնաձիգի հետ վարվելու անվտանգության կանոնները: 4.Համաձայն նորմացույցի ինքնաձիգը ոչ լրիվ *քանդի-հավաքի:* 5.*Գիտի* ինքնաձիգի փամփուշտների ընդհանուր կառուցվածքը և հիմնական տեսակները: 6.Ինքնաձիգի փամփշտատուփը *քանդի-հավաքի*, համաձայն նորմացույցի *լիցքավորի*: *Կատարի* փամփշտատուփի լիցքաթափում: 7.Գիտի «ուղիղ կրակոց» հասկացությունը, «պատսպարված, խոցելի և մեռյալ» տեղամասերը:		
		Ինժեներական պատրաստության հիմունքներ		
19-20		**Թեմա 1.** Զինվորի ամրաշինական գործունեությունը:	2ժամ	գ
	Նպատակը	1.Ծանոթացնել հրաձիգների համար կրակի վարման ինժեներական կառույցները: 2.Ուսուցանել զինվորի անհատական խրամատի սարքավորման կարգը:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* զինվորի անհատական խրամատին ներկայացվող պահանջները, խրամատի սարքավորման հերթականությունը, չափսերը: 2.Չափսերով *փորի* զինվորի անհատական խրամատ:		
		Իրավական պատրաստություն		
21		**Թեմա 1.** ՀՀ ԶՈՒ կանոնադրություն: Պետեր և ենթականեր: Ավագներ և կրտսերներ: Հրաման և կարգադրություն:	1ժամ	
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ.		

		1.1.զինվորական կոչումների, դրանց տարբերանշանների վերաբերյալ, 2.2.պետեր և ենթականեր, ավագներ և կրտսերներ հասկացությունների վերաբերյալ: 2.Հաղորդել գիտելիքներ, հրամանի և կարգադրության, դրանց օրենսդրական հիմքերի մասին: 3.Ծանոթացնել զինվորական քաղաքավարության կանոններին:		
	Վերջնարդյունքը	1.*Տարբերի* պետեր-ենթականեր, ավագներ-կրտսերներ ըստ պաշտոնների և կոչումների: 2.*Բացատրի* ի՞նչ է հրամանը և ի՞նչ է կարգադրությունը, և *տրաբերի* դրանք:		
		Միջազգային մարդասիրական իրավունք		
22		**Թեմա 1.** Բժիշկների, հոգևորականների, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչների անձեռնմխելիությունը զինված ընդհարումների ժամանակ	1ժամ	
	Նպատակը	1.Ծանոթացնել միջազգային մարդասիրական իրավունքի հիմունքներին, էությանը: 2.Պարզաբանել զինված ընդհարումների ժամանակ գործող ՄՄԻ կանոնները: 3.Սերմանել հստակ, իրավական և բարոյական տեսանկյունից ճիշտ դիրքորոշումներ ընդհարումների ժամանակ մարտատադշտում հայտնված որոշ կատեգորիայի մարդկանց նկատմամբ:		
	Վերջնարդյունքը	*Գիտի*, որ պատերազմի դաշտում բժիշկները, հոգևորականները, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչները պաշտպանված եմ միջազգային իրավունքի նորմերով և դրանց խախտումը կարող է բերել իրավական հետևանքների:		
		Ռազմական տեղագրության հիմունքներ		
23		**Թեմա 1.** Տեղագրական քարտեզ	1ժամ	
	Նպատակը	1.Ուսուցանել տեղագրական քարտեզի կարդալը և կողմնորոշել այն տվյալ տեղանքում: 2.Ձևավորել աշակերտների մոտ տեղանքում կողմնորոշվելու հմտություն:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* տեղագրական քարտեզի մասշտաբները, առարկաների պայմանական նշանները: 2.*Կարդա* տեղագրական քարտեզը և *կողմնորոշի* այն տվյալ տեղանքում:		
24-26		**Թեմա 2.** Տեղաշարժ տեղանքում	3ժամ	
	Նպատակը	1.Սովորեցնել մագնիսական ազիմուտի սահմանումը և դրա նշանակությունը: 2.Բացատրել ազիմուտի որոշման ձևերը:		

		3.Ներկայացնել ազիմուտով շարժվելու կարգը: 4.Ձևավորել աշակերտների մոտ տեղանքում կողմնորոշվելու հմտություն:		
	Վերջնարդյունքը	1. *Իմանա և բացատրի* ինչ է ազիմուտը, 2. *Որոշի* մագնիսական ազիմուտը կողմնացույցով և տեղագրական քարտեզով 3. *Իմանա և բացատրի* քարտեզի մասշտաբները, պայմանական նշանները: 4. *Որոշի* ազիմուտը, շարժվի ազիմուտով:		
		«Հոգեբանական պատրաստություն» հասկացությունը և տեսակները		
27		**Թեմա 1.** Փոխհարաբերությունը զինվորական կոլեկտիվում:	1ժամ	
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ զիվորական կոլեկտիվում փոխհարաբերությունների կարևորության վերաբերյալ: 2.Ծանոքացնել զինվորական կոլեկտիվներում միջանձնային կոնֆլիկտների առաջացման պատճառներին: 3.Բացատրել դրանց հաղթահարման ուղիները: 4.Ձևավորել միմյանց նկատմամբ փոխըմբռնում և հանդուրժողականություն:		
	Վերջնարդյունքը	1.*Կարևորի* առողջ փոխհարաբերությունը զինվորական կոլեկտիվում: 2.*Հարգի* ընկերների պատիվն ու արժանապատվությունը: 3.Կոնֆլիկտների ժամանակ *ցուցաբերի* անկողմնակալություն: 4.*Գտնի* կոնֆլիկտներն առանց հետևանքների հաղթահարման ուղիներ:		
		Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում		
28-30		**Թեմա 1.** Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ կոմունալ-կենցաղային համակարգում: Վարքի կանոնները:	2ժամ	
	Նպատակը	Ուսուցանել ստեղծված տեխնածին արտակարգ իրավիճակներում արագ և ճիշտ արձագանքումը, անվնաս մնալը:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* բնակելի և ոչ բնակելի կառույցների հանկարծակի փլուզման պատճառները: 2.*Տիրապետի* կոմունալ կենցաղային համակարգում տեխնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոններին և *ներկայացնի* դրանք:		
		Թեմա 2. Հրդեհներ պայթուններ	1ժամ	
	Նպատակը	Բացատրել հրդեհի ժամանակ այրվող նյութերի ոչ լրիվ այրման, ջերմաստիճանի, ծխագոյացման, պինդ նյութերի քայքայման և հալչման ժամանակ		

		անվտանգության կանոնները:		
	Վերջնարդյունքը	Գիտի հրդեհի ժամանակ այրվող նյութերի ոչ լրիվ այրման, ջերմաստիճանի, ծխագոյացման, պինդ նյութերի քայքայման և հալչման ժամանակ անվտանգության կանոնները:		
		Առաջին օգնության հիմունքներ		
31-33		**Թեմա 1.**Վնասվածքներ: Վերքեր: Արյունահոսության դադարեցումը և վերքերի նախնական մշակումը:	2ժամ	
	Նպատակը	1.Տեղեկացնել օրգանիզմի կենսագործունեությունը ապահովող ֆունկցիաների մասին: 2.Բացատրել գիտակցության խանգարումների ձևերը, նշանները: 3.Ուսուցանել անգիտակից տուժածին կողքային անվտանգ դիրքի (ԿԱԴ) բերման մեթոդիկան:		
	Վերջնարդյունքը	1.Գնահատի օրգանիզմի կենսագործունեությունը (“CAB”): 2.Համեմատի գիտակցության մակարդակները: 3.Գնահատի տուժածի գիտակցության վիճակը և խանգարման ձևերը: 4.Անգիտակից (պայմանական) տուժածին բերի կողքային անվտանգ դիրքի (ԿԱԴ):		
		Թեմա 2. Շնչուղիների անցանելիության ապահովումը:	1ժամ	
	Նպատակը	1.Հաղորդել գիտելիքներ շնչառության սուր խանգարումների, նշանների, պատճառների մասին: 2.Բացատրել շնչուղիների խցանումը օտար մարմնով, մասնակի և լրիվ խցանման նշանները, տուժածին ցուցաբերվող առաջին օգնության քայլերը (տարբեր տարիքային խմբերի): 3.Սովորեցնել սիրտ-թոքային վերակենդանացման (ՍԹՎ), փուլերը, կրծքային սեղմումները և ներփչումը, իրականացման կանոնները:		
	Վերջնարդյունքը	1.*Տարբերակի* սահմանային վիճակի փուլերը, ախտանիշները: 2.*Ախտորոշի* կլինիկական մահը: 3.*Պարզի* շնչառության կանգի պատճառները: 4.*Ապահովի* շնչուղիների անցանելիությունը: 5.*Իրականացնի* արհեստական շնչառություն («բերան-բերան», «բերան-քիթ» և այլ մեթոդներով): *Կատարի* կրծքային սեղմումներ և ներփչումներ: 6.*Իրականացնի* ՍԹՎ մեկ և երկու հոգով: *Գնահատի* ՍԹՎ արդյունավետությունը:		
34		Ամփոփում	1ժամ	